Վիվասել-ՄՏՍ-ը Հայաստանին
VivaCell-MTS to Armenia
2008



Edition 2

Կորպորատիվ Սոցիալական Պատասխանատվություն
Corporate Social Responsibility

VIVAcell MTS

Երևան
«Կ-Տելեկոմ» ՓԲԸ
2008

ՀՏԴ 654
ԳՄԴ 32.882
Վ 669

ՎիվաՍել-ՄՏՍ-ը Հայաստանին
Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն
Եր.: Ասողիկ, 2008. - 84 էջ

Վ 669 Սույն գիրքը տպագրված է «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի պատվերով և նախատեսված չէ վաճառքի համար:

ԳՄԴ 32.882

ISBN 978-9939-50-063-8
«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ, 2008



Ռալֆ Յիրիկյան, ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն

Ralph Yirikian, VivaCell-MTS General Manager

## Հարգելի բարեկամներ,

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը ծնվում է հավատից. այն սկիզբ է առնում մեզնից յուրաքանչյուրում:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մեր քաղաքականությունը սերտորեն կապված է հաճախորդներին հեռահաղորդակցության ոլորտում բարձրորակ ծառայություններ մատուցելու մեր առաքելության հետ:

Մենք հոգում ենք: Ահա թե ինչու ենք ձգտում արձագանքել ինչպես մեր բաժանորդների, այնպես էլ ընդհանուր առմամբ հասարակության նույնիսկ ամենաչնչին կարիքներին: Ավելին, պատասխանատվության այս զգացման դրսևորումն այստեղ չի սկսվում. առաջին հերթին մենք հոգում ենք մեր հաջողությունների հիմնական շարժիչ ուժի՝ մեր աշխատակիցների և նրանց ընտանիքների մասին: Միասին մենք մի հզոր կազմակերպություն ենք՝ պատրաստ ծառայելու և ձեռք մեկնելու մեր ազգին:

Միասնականության և համատեղ պատասխանատվության շնորհիվ է, որ մենք կարողանում ենք աջակցել մեր ժողովրդին ամբողջ Հայաստանով մեկ, լուծել նրանց սոցիալ-տնտեսական խնդիրների մի մասը, բարելավել նրանց կենսական պայմաններն ու նպաստել մշակույթի, սպորտի, գիտության, արվեստի և կրթության զարգացմանը:

Դրական փոփոխությունների նկատմամբ հավատն է մեզ թույլ տալիս գործել ու հասնել արդյունքի: Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունն է, որ ամրապնդում է մեր հավատը դեպի լավը: Յուրաքանչյուր նոր օր մենք՝ որպես կորպորատիվ քաղաքացի, առաջ ենք շարժվում՝ ձեռք ձեռքի հասարակության հետ՝ մշտապես ձգտելով ավելի լավ ապագայի:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը մեր դրական մոտիվացիայի և ոգեշնչման աղբյուրն է: Մեր էությունն ու գործունեությունն արտացոլում են մեր խորին նվիրվածությունը, սերն ու հարգանքը մեր հասարակությանն ու ազգի հանդեպ: Հասարակության հետ միասին մենք մուտք ենք գործում 2009թ. ավելի մեծ նպատակներով և հույսով, որ կունենանք ավելի շատ կորպորատիվ քաղաքացիներ, որ կհավատան կորպորատիվ սոցիալական պատասխանատվությանն ու կգործեն դրա շրջանակներում:

Ռալֆ Յիրիկյան, ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն

## Dear Friends,

Corporate Social Responsibility is an act of belief that ignites and develops inside each of us and then comes out seeking others.

Our focus on Corporate Social Responsibility is bound to our commitment on providing our customers with the state of the art solutions in the telecom industry.

We care. That's why we strive to attend to the smallest need of our customers, and the society at large. Nevertheless this sense of responsibility does not start here: we care first about the main steering force behind our achievements - our people (our employees) and their own small societies or families, and with them we form a stronger entity and bonding able to be of better support and service to our Nation.

It is through unity and joint responsibility that we are able to support people in all the regions of Armenia, to solve part of their socio-economic issues, to improve their living conditions, and support the development of culture, sports, science, arts and education.

We believe in change; that's why we can deliver. Corporate Social Responsibility helps us believe, and strengthens our belief in good deeds. With every day, as a socially responsible corporate citizen, we are moving forward hand in hand with society, aiming always for a better tomorrow.

Corporate Social Responsibility is a basic foundation of our positive motivation and inspiration to create and innovate. What we are and what we do reflects our deep commitment to the society we love and respect and to our Nation that we honor. Together with our society we step into 2009 with more objectives, and in anticipation to have more corporate citizens to believe in Corporate Social Responsibility and act accordingly.

Ralph Yirikian, VivaCell-MTS General Manager

# Մեր նվաճումները

## Մարդկային ռեսուրսների վարչություն

Լինելով ՎիվաՍել-ՄՏՍ-ի գործունեության հիմքում՝ աշխատակիցն ընկերության հիմնասյունն է և ընկերության հաջողության կարևորագույն նախապայմանը: Մարդկային ռեսուրսների վարչությունում կիրառվում են մեթոդներ, որոնք բխում են միայն լավագույններին աշխատանքի ընդունելու մեր սկզբունքից: ՎիվաՍել-ՄՏՍ-ում չկա սեռական, տարիքային, առողջական վիճակի հետ կապված, կրոնական, մշակութային կամ որևէ այլ տարբերակում. մենք բոլորս մի ամբողջություն ենք՝ միավորված մեկ նպատակի շուրջ՝ հասնել արդյունքի: Ավելին, մենք քաջալերում ենք ոչ ստանդարտ մտածողությունը, որի արդյունքում առաջանում են լավագույն գաղափարները: 2008թ.-ին էլ մեր ընկերություն աշխատանքի են ընդունվել հաշմանդամներ, որոնց նկատմամբ վերաբերմունքն այլ կերպ անվանել չի կարելի, քան հարգանք և հավասարություն: Մեր աշխատակիցներից յուրաքանչյուրը գնահատվում է ըստ իր կատարած աշխատանքի: 2008թ.-ին էլ մեր աշխատակիցները մասնակցել են վերապատրաստման ծրագրերի: Մենք համագործակցել ենք տարբեր ՀԿ-ների և կրթական հաստատությունների հետ՝ մեր աշխատակիցներին տալով մասնագիտական զարգացման և առաջխաղացման հնարավորություն: Մենք փորձում ենք անել այնպես, որ մեր աշխատակիցները ստանան լավագույնը, քանի որ աշխատակիցը մեր ընկերության կարևորագույն արժեքներից է:

## Our Achievements

### Human Resources Department

Being at the core of VivaCell-MTS business, the employee is the Company's main pillar and the main important precondition for our Company's success. HR department works with a unique technology driven by our principle to always recruit the best. At VivaCell-MTS diversity isn't only about gender, age, state of health, religion or cultural background; we all are one entity with an objective to deliver. Moreover, we encourage thinking differently thus making sure we are getting the best ideas. In 2008 our Company further employed handicapped people and the attitude to them can't be described other than respect and equity. Every individual is assessed on his/her capability to get the job done properly. During 2008 again our employees participated in qualification projects. We cooperated with different NGOs and educational institutions for our employees to have a chance to develop their career path. We try to provide the best to each of our employee as he/she is our core value.

## Կոմերցիոն վարչություն

Ընկերության ամենամեծ՝ Կոմերցիոն վարչությունը 2008թ.-ին լուրջ հաջողություններ է արձանագրել ինչպես բաժանորդների թվի, այնպես էլ բաժանորդների սպասարկման առումով: Մենք հոգում ենք մեր բաժանորդների մասին, և հենց այս հոգածությունն է ուղղորդում մեր ամբողջ կոմերցիոն գործունեությունը: Քանի որ ՎիվաՍել-ՄՏՍ-ի գործունեության հիմքում բաժանորդներն են, մենք խիստ կարևորում ենք նրանց համար ավելի հասանելի լինելն ու բարձրորակ ծառայություններ մատուցելը: 2008թ.-ի մեր կարևորագույն նվաճումներից են.

- Շուկայում առաջատարի դիրքի ամրապնդում.
    - բաժանորդների թվի զգալի աճ
    - սպասարկման կենտրոնների ցանցի ընդլայնում ամբողջ Հայաստանում
- Զանգերի կենտրոնի անձնակազմի ավելացում ապահովելու համար բաժանորդների հետ ավելի արդյունավետ շփում և ավելի արագ արձագանքում նրանց խնդիրներին,
- Բազմաթիվ նոր ծառայություններ, որոնք բաժանորդներին հնարավորություն են տալիս վայելելու առավել հարմարավետ, արդյունավետ և հաճելի կապ,
- Ռոումինգ գործընկերների թվի զգալի աճ բոլոր մայրցամաքներում, ինչի շնորհիվ մեր բաժանորդներն ամենուրեք կարող են իրենց զգալ ինչպես տանը,
- Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում մի շարք նպատակային սոցիալական ներդրումների իրականացում:

## Commercial Department

Commercial, being the biggest department in the Company, achieved significant performance results in 2008 both in terms of its customer base and in customer care. "Caring" is the main umbrella under which flow all our commercial activities. As the Subscriber is at the core of VivaCell-MTS activities, we focus our efforts on becoming more accessible to our customers and provide them with high-quality products and services. Here are our key accomplishments in year 2008:

- We strengthened our market leadership position further:
  - Substantially increasing the customer base
  - Expanding the network of service centers throughout Armenia
- Call Center staff was increased to ensure more direct communication with customers and effective feedback loop,
- We introduced a wide range of new products and services enabling our subscribers further enjoy the convenience, efficiency and entertainment of mobile communication,
- The number of our international roaming partners witnessed a significant increase in all continents; we make our customers feel at home wherever they are,
- We realized many targeted social investments in the frames of Corporate Social Responsibility.

## Որակի և ներքին վերահսկողության վարչություն

Որակը ՎիվաՍել-ՄՏՍ-ի հիմնարար արժեքներից է: Որակ այն ամենում, ինչ մենք անում ենք: Որակի և ներքին վերահսկողության վարչությունն այն մշտարթուն օղակն է, որն ապահովում է ընկերության բոլոր կանոնների, հայեցակարգերի ու ընթացակարգերի պատշաճ կատարումը: Ընկերության աճին զուգընթաց աճում է որակի և ներքին վերահսկողության հարցերին ավելի խստորեն մոտենալու անհրաժեշտությունը: Լինելով կորպորատիվ քաղաքացի՝ մենք պարտավոր ենք մանրակրկիտ ուշադրություն դարձնել յուրաքանչյուր մանրուքի, որը կարող է ազդեցություն ունենալ մեր մատուցած ծառայությունների որակի և մեր աշխատանքային հարաբերությունների վրա: Մենք համոզված ենք, որ ներդնելով համապատասխան ռազմավարություններ, կանոնակարգեր և ընթացակարգեր՝ կարող ենք նպաստել ինչպես ցանցի անխափան աշխատանքին, այնպես էլ այլ վարչությունների մեր գործընկերների արդյունավետ, կազմակերպված և որակյալ աշխատանքին: Որակը և ներքին վերահսկողությունը սկիզբ են առնում ընկերության ներսում և, ի վերջո, բաժանորդներին են հասնում մեր մատուցած ծառայությունների միջոցով:

## Quality and Internal Control Department

Quality is one of VivaCell-MTS core values. Quality in everything we do! Quality and Internal Control Department is the ever opened eye to make sure all Company's rules, regulations and procedures are properly implemented. Continuously expanding, we need to be adamant when it comes to issues of quality and internal control. Being a corporate citizen we need to pay serious attention to each element, which can influence quality of services provided and employee relations. We are sure that with appropriate strategies, policies and procedures put into place, we can support both the uninterrupted operation of the network and streamline the efficient, organized and high-quality work of our colleagues from other departments. Quality and internal control are in the very core of the Company and passing through the whole value chain they reach our customers with our products and services.

## Ադմինիստրատիվ ծառայությունների վարչություն

Տարատեսակ կազմակերպչական գործառույթների ու ծառայությունների համար պատասխանատու Ադմինիստրատիվ ծառայությունների վարչությունն այն շարժիչ ուժն է, որն ապահովում է բոլոր վարչությունների անխափան աշխատանքը: Վարչությունը մշտապես անում է ամեն ինչ, որպեսզի ՎիվաՍել-ՄՏՍ-ի աշխատանքային միջավայրը լինի լավագույնը:

## Administration Services Department

Being responsible for all the logistics, Administrative department is the engine that empowers the mobility of all other departments. The department makes sure at all time that VivaCell-MTS environment is the best workplace.

## Տեղեկատվական համակարգերի վարչություն

Ճշգրտորեն կառավարելով ներքին ցանցը՝ Ինֆորմացիոն համակարգերի վարչությունը կապ է ապահովում բոլոր վարչությունների միջև և ձգտում է բաժանորդներին մատուցել որակյալ ծառայություններ՝ նորարարական տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ: Բաժանորդների անխափան սպասարկում ապահովելու նպատակով մենք ներդրել ենք բիլլինգի/գանձումների արդյունավետ համակարգեր, իսկ ավտոմատացման և զարգացման շնորհիվ շարունակում ենք լավագույն լուծումները մատուցել: 2008թ.-ը նշանակալից էր նաև հեռահաղորդակցության ոլորտում նորարարական ծրագրային ապահովման համաշխարհային առաջատարների հետ արդյունավետ համագործակցության առումով, ինչն իր հերթին հնարավորություն տվեց մշակել և շուկա հանել մի շարք նորարարական ծառայություններ:

## Information Systems Department

Meticulously managing the internal network IS department connects all our departments to each other, and strives to provide quality services to our subscribers by applying innovative information technologies. To secure smooth operational performance of customer service we have put into operation efficient and reliable systems of billing/charging, and with automation and development we keep on delivering the best solutions. 2008 also marked significant progress in terms of effective partnership with world-class suppliers of innovative software for telecom sphere, which in its turn allows developing and releasing to the market some new and innovative products and services.

## Տեխնիկական վարչություն

ՎիվաՍել-ՄՏՍ-ը կապ է ապահովում ամբողջ Հայաստանում: Իսկ ընկերության Տեխնիկական վարչությունը ձգտում է ապահովել ցանցի աշխատանքի բարձր որակը ռադիոծածկույթի ամբողջ տարածքում: Սահմանային հեռավոր բնակավայրեր, կարևորագույն տրանսպորտային հանգույցներ և անգամ սակավ բնակեցված տարածքներ հասնող ռադիոծածկույթի շնորհիվ ՎիվաՍել-ՄՏՍ-ն արդեն հասանելի է հանրապետության գրեթե ողջ բնակչությանը: Ավելին, որպես սոցիալապես պատասխանատու ընկերություն՝ մենք դուրս եկանք մեր սովորական գործառույթների շրջանակներից և մեր բազային կայանների միջոցով հնարավորություն ստեղծեցինք էլեկտրականություն հասցնել Գեղարքունիքի մարզի երեք գյուղեր, որոնք 15 տարի շարունակ զուրկ էին էլեկտրականությունից: Կուտակված գիտելիքներն ու փորձը մեզ երազելու, հավատալու և նպատակներին հասնելու համարձակություն են տալիս: Հենց սա է ընկած երրորդ սերնդի (3G) ցանցի ստեղծման ծրագրերի հիմքում, ցանց, որը նորագույն տեխնոլոգիաների և ստեղծագործ մտքի արգասիք է:

## Technical Department

VivaCell-MTS covers all Armenia. Having that objective in mind, the Technical department strives to maintain a high performance network. With our radio coverage extending to border settlements, road junctions, and places with even small population, VivaCell-MTS is already widely available to the population. Moreover, being socially responsible we went beyond our usual activities, and through our base stations' infrastructure we started providing electricity to three remote villages of Gegharkunik region, after 15 years of power blackout. Our accumulated skills and experience give us strength to dare to dream, believe, and achieve. This is the foundation for rolling-out the third generation (3G) network of VivaCell-MTS, a product of innovative mind and advanced technology.

## Ֆինանսների և հաշվապահության վարչություն

Արդյունավետությունը հաջողության գրավականն է: Որակյալ և գնային առումով արդյունավետ ծառայություններ մատուցելը մեզ՝ որպես ընկերություն, յուրահատուկ է դարձնում: Ֆինանսական և հաշվապահական արդյունավետ ներքին համակարգերը մեզ հնարավորություն են տալիս վարելու գնային առումով արդյունավետ գործունեություն: Նվազագույն ծախսերով առավելագույն արդյունքների հասնելը կարևոր է ոչ միայն բիզնես գործընթացների համար, այլ նաև սոցիալական առումով. ռեսուրսների խնայողությունը մեզ հնարավորություն է տալիս կայուն զարգացմանն աջակցելու մեր պարտավորության շրջանակներում ավելի շատ հատկացումներ անել սոցիալական կարևորություն ունեցող խնդիրների լուծմանը: Այս սկզբունքն է ընկած Ֆինանսների և հաշվապահության վարչության գործունեության հիմքում: Մեր վարչությունում կատարվող վերլուծությունները թույլ են տալիս հասնել ծրագրած ցուցանիշներին և պահպանել առաջատարի մեր դիրքը Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտում՝ մշակելով և մատուցելով լավագույն ծառայությունները:

## Finance and Accounting Department

Efficiency is the key of success. Providing quality and cost-effective products make us unique as a Company. With effective internal systems related to finances and accounting we manage to reach cost-effectiveness. Reaching maximum results with minimum expenditures is important not only for business processes but also from the social point of view: by saving resources we can spend more on socially-important causes as part of our commitment to support sustainable development. This is the main principle underlying the work in the Finance and Accounting Department. The analyses made there gives us the opportunity to reach our key performance indicators and maintain our leadership in the telecom market of Armenia by developing and providing the best-in-class services.

## Անվտանգության բաժին

Ֆիզիկական, տեղեկատվական և տնտեսական անվտանգության կարևորությունն անհնար է թերագնահատել: Աշխատակիցների և նրանց ամենօրյա աշխատանքի անվտանգության ապահովմանն ուղղված իր զգոն աշխատանքով Անվտանգության բաժինն իր ուրույն ձևով է նպաստում Ընկերության գործունեության արդյունավետությանը: Աշխատակիցների անվտանգությունը ՎիվաՍել-ՄՏՍ-ի կարևորագույն արժեքներից է, և Անվտանգության բաժնի բոլոր աշխատակիցներն անում են ամեն ինչ այն ապահովելու համար՝ դրանով իսկ դառնալով Ընկերության ամենակարևոր արժեքի՝ պատասխանատվության ստեղծման մասնակից:

## Security Team

The importance of physical, informational and economic security cannot be underestimated. Realizing its watchful work to ensure the security of the staff and its everyday operations, the Security team contributes to the overall productivity of the Company in a specific way. Safety of employees is one of the basic values of VivaCell-MTS, and all of our Security staff do their best to ensure it, thus being part of generating the most precious value created at the Company – responsibility.

## Իրավաբանական բաժին

Որպես պատասխանատու կորպորատիվ քաղաքացի՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ը հարգում է օրենքը, ենթարկվում դրան և ծավալում է իր գործունեությունը՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Իրավաբանական բաժինն է ապահովում պետական մարմինների, բաժանորդների և մատակարարների հետ հարաբերությունների իրավական կողմը: Նրանք պատրաստում են գործընկերների հետ մեր իրավական հարաբերությունները կանոնակարգող պայմանագրերը, որոնք լիովին համապատասխանում են գործող օրենսդրությանը: Իրավաբանական բաժնի կողմից իրականացվող՝ ռազմավարական ծրագրերի ռիսկերի գնահատումն օգնում է ապահովել ընկերության գործունեության համապատասխանությունը բոլոր իրավական պահանջներին:

## Legal Team

As a responsible corporate citizen VivaCell-MTS is under the law; respects the law and conducts its activities according to the legislation of the Republic of Armenia. Our Legal staff is in charge of the legal side of relations with State institutions, subscribers and suppliers. They prepare contracts which fully regulate our legal relations with partners, and are in full conformity with the acting legislation. Risk assessment of strategic projects implemented by the legal team helps ensuring the alignment of our processes with all legal implications.

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը սերտորեն կապված է ՎիվաՍել-ՄՏՍ-ի մյուս արժեքների հետ: Լինելով շուկայի Առաջատար՝ մենք հարգում ենք Հաճախորդին, քանի որ նա է մեր գործունեության հիմքը: Ծառայությունների կատարյալ Որակ ապահովելու ձգտումը մեզ ստիպում է աչալրջորեն հետևել տեխնոլոգիական Նորարարություններին: Մեր հաջողությունները հնարավոր են դառնում մեր բաժանորդների Հավատարմության և Թիմային աշխատանքի շնորհիվ: Մեր գործունեության Թափանցիկությունը մեզ՝ որպես կորպորատիվ քաղաքացու, հասանելի է դարձնում Հասարակության համար: Արժեք ստեղծելու մեր մշակույթը ստիպում է մշտապես ուշադրության կենտրոնում ունենալ Արդյունքը և Տեր լինել մեր խոստումներին: Այս ամենի հիմքում է Աշխատակիցը:

Corporate Social Responsibility is the inspirational source and objective of other VivaCell-MTS values. With **Leadership** in the market we show respect towards our **Clients** as they are at the core of our activities. Striving for perfect **Quality** of our services makes us stay committed to our quest for technological **Innovations**. Our success comes from the **Loyalty** of the subscribers and is achieved by **Teamwork.** The **Transparency** of our activities makes us, as a corporate citizen, accessible for the **Community**. Our culture of creating market value requires from us being **Result-oriented** and feeling and living the **Ownership** for our promises. The foundation of all this is the **Employee.**

## 2008թ. իրականացված սոցիալական ներդրումներ

- «Ազգային պատկերասրահ» չորրորդ միջազգային երաժշտական փառատոն
- «Ոսկե ծիրան» Երևանի միջազգային կինոփառատոնի հովանավորություն
- «Վերադարձի» փառատոն
- Աջակցություն «Աջատամարտիկ» ռազմահայրենասիրական բարեգործական ՀԿ-ին
- Աջակցություն «Դեպի Հայք» հիմնադրամին
- Աջակցություն «Կիլիկիո Հայաստան» ֆիլմի նկարահանմանը
- Աջակցություն «Համահայկական միջազգային երիտասարդական կենտրոն» ՀԿ-ին
- Աջակցություն «Հայկական Կարիտաս»-ին
- Աջակցություն Աշտարակ քաղաքի Շախմատի ֆեդերացիային
- Աջակցություն Երևանի Հ. Գասպարյանի անվան շախմատի և շաշկու մանկապատանեկան օլիմպիական մարզադպրոցին
- Աջակցություն Միկրոէլեկտրոնիկայի 3-րդ հայաստանյան օլիմպիադային
- Աջակցություն Ֆրիտյոֆ Նանսենի հիմնադրամին
- Արգելապատնեշի կառուցում Գեղարքունիքի մարզի Գեղամավան գյուղում
- Արվեստի դպրոցի վերանորոգում Գեղարքունիքի մարզի Ջովաբեր գյուղում
- Արվեստի դպրոցի վերանորոգում Լոռու մարզի Օձուն գյուղում
- Արվեստի դպրոցի վերանորոգում Կոտայքի մարզի Գառնի գյուղում
- Արվեստի դպրոցի վերանորոգում Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում
- Բուժսարքավորումների տրամադրում Երևանի Մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոնին
- Բուժսարքավորումների տրամադրում «Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամին
- Դասասենյակների վերանորոգում Երևանի թիվ 10 արվեստի դպրոցում
- Դպրոցի վերանորոգում Արարատի մարզի Ուրցաձոր գյուղում
- Գեղարվեստի դպրոցի վերանորոգում Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում
- Գազատարի կառուցում Գեղարքունիքի մարզի Դրախտիկ գյուղում
- Գազատարի կառուցում Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր գյուղում
- Գազատարի կառուցում Գեղարքունիքի մարզի Լիճք գյուղում
- Գազատարի կառուցում Գեղարքունիքի մարզի Վահան գյուղում
- Գազատարի կառուցում Գեղարքունիքի մարզի Վարդաձոր գյուղում
- Գույքի տրամադրում Երևանի ազգային երաժշտական գործիքների դպրոցին
- Գույքի տրամադրում Երևանի Պետական կամերային երաժշտության թատրոնին
- Եկեղեցու վերականգնում Կոտայքի մարզի Մեղրաձոր գյուղում
- Երաժշտական գործիքների տրամադրում Լոռու մարզի Սպիտակ քաղաքի արվեստի դպրոցին
- Երևանի Գեղարվեստի և դեկորատիվ կիրառական արվեստի ստուդիա-քոլեջի վերանորոգում
- Երևանի Քանաքեռ-Զեյթուն համայնքի Ա. Տեր-Ղևոնդյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցի վերանորոգում
- Երևանի ֆիլհարմոնիկ դպրոցի (պարի դպրոցի) վերանորոգում

## 2008թ. իրականացված սոցիալական ներդրումներ

- Էլեկտրականության անցկացում Գեղարքունիքի մարզի Յանըղ, Քարվանսարա և Փոքր Աստղաձոր գյուղերում
- Խաղահրապարակի կառուցում Վայոց ձորի Խաչիկ գյուղում
- Խաղահրապարակների կառուցում Կոտայք մարզի Չարենցավան քաղաքում
- Խմելու ջրագծի կառուցում Արագածոտնի մարզի Փարպի և Ուշի գյուղերում
- Խմելու ջրագծի վերանորոգում Գեղարքունիքի մարզի Վաղաշեն գյուղում
- Կոմիտասի Պատարագի ամբողջական ձայնագրության իրականացում
- Հակակարկտային համակարգի տեղադրում և գործարկում Արմավիրի մարզի Շենիկ գյուղում
- Համագործակցություն «Հայաստանում Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի հետ
- Մանկապարտեզի կառուցում Տավուշի մարզի Մովսես գյուղում
- Մանկապարտեզի վերանորոգում Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքում
- Մանկապարտեզի վերանորոգում Լոռու մարզի Ալավերդի քաղաքում
- Մշակույթի տան ամֆիթատրոնի կառուցում Վայոց ձորի Եղեգնաձոր քաղաքում
- Մշակույթի տան վերանորոգում Վայոց ձորի Եղեգնաձոր քաղաքում
- Նոր բնակարանների տրամադրում Գյումրիի երկրաշարժից տուժած ընտանիքներին
- Շտապ օգնության ավտոմեքենայի տրամադրում Վայոց ձորի Խաչիկ գյուղին
- Ոռոգման ջրագծի վերականգնում Գեղարքունիքի մարզի Մադինա գյուղում
- Պուրակի կառուցապատում Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում
- Ջեռուցման համակարգի տեղադրում Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի միջնակարգ դպրոցում
- Ջեռուցման համակարգի տեղադրում Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի եկեղեցում
- Ջեռուցման համակարգի տեղադրում Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի բուժհամալիրում
- Ջեռուցման համակարգի տեղադրում Արմավիրի մարզի Մրգաշատ գյուղի դպրոցում
- Ջեռուցման համակարգի տեղադրում Երևանի Գեղարվեստի և դեկորատիվ կիրառական արվեստի ստուդիա-քոլեջում
- Ջեռուցման համակարգի տեղադրում Երևանի Նոր Նորք համայնքի երաժշտական դպրոցում
- Ջեռուցման համակարգի տեղադրում Երևանի Նոր Նորք համայնքի թիվ 9 մանկապարտեզում
- Ջեռուցման համակարգի տեղադրում Տավուշի մարզի Աչաջուր գյուղի մանկապարտեզում
- Ջրագծի կառուցում Արագածոտնի մարզի Արտաշավան գյուղում
- Ջրատարի անցկացում Վայոց ձորի Խաչիկ գյուղում
- Ջրատարի անցկացում Տավուշի մարզի Մովսես գյուղում
- Ջրատարի վերանորոգում Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն գյուղում
- Վերանորոգման աշխատանքներ Երևանի Աջափնյակ համայնքի մանկապարտեզներում
- Տան կառուցում Լոռու մարզում
- Տան կառուցում Կոտայքի մարզի Առինջ գյուղում
- Տան կառուցում Վայոց ձորի Խաչիկ գյուղում
- Եվ մի շարք այլ ծրագրեր...

## Social Investments Made in 2008

- Ambulance for Khachik village, Voyots Dzor region
- Anti-hail system establishment and installation in Shenik village, Armavir region
- Arts school renovation in Dilijan, Tavush region
- Arts school renovation in Garni village, Kotayk region
- Arts school renovation in Odzun village, Lori region
- Arts school renovation in Zovaber village, Gegharkunik region
- Building a playground in Khachik village, Vayots Dzor region
- Building an amphitheater for Yeghegnadzor House of Culture, Vayots Dzor
- Church reconstruction in Meghradzor village, Kotayk region
- Classroom renovation in Arts school N10, Yerevan
- Cooperation with the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets (FPWC) in the Republic of Armenia
- Drinking water pipeline renovation in Vaghashen village, Gegharkunik region
- Drinking water system installation in Parpi and Ushi villages, Aragatsotn region
- Electricity supply in Yanegh, Karvansara and Pokr Astghadzor villages, Gegharkunik region
- Equipment and furnishing for the Music School of Armenian National Instruments, Yerevan
- Equipment for the State Musical Chamber Theater, Yerevan
- Fine Arts school renovation in Sisian, Syunik region
- Gas system installation in Drakhtik village, Gegharkunik region
- Gas system installation in Lanjaghbyur village, Gegharkunik region
- Gas system installation in Lichk village, Gegharkunik region
- Gas system installation in Vahan village, Gegharkunik region
- Gas system installation in Vardadzor village, Gegharkunik region
- Heating system installation in Achajur village kindergarten, Tavush region
- Heating system installation in Ashtarak secondary school, Aragatsotn region
- Heating system installation in Metsamor Medical Center, Armavir region
- Heating system installation in Mrgashat village school, Armavir region
- Heating system installation in Nor Nork kindergarten N9, Yerevan
- Heating system installation in Nor Norq music school, Yerevan
- Heating system installation in the Aparan church, Aragatsotn region
- Heating system installation in the Fine Arts and Decorative Applied Arts Studio-College, Yerevan
- House building in Arinj village, Kotayk region
- House building in Khachik village, Vayots Dzor region
- House building in Lori region

## Social Investments Made in 2008

- Irrigation water pipeline reconstruction in Madina village, Gegharkunik region
- Kindergarten building in Movses village, Tavush region
- Kindergarten renovation in Alaverdi, Lori region
- Kindergarten renovation in Chambarak, Gegharkunik region
- Komitas' Patarag full recording
- Medical equipment for the Armenian Bone Marrow Donor Register Charitable Foundation
- Medical equipment for the Scientific and Research Center of Maternal and Child Health Protection
- Musical Instruments for Spitak Arts school, Lori region
- New apartments for families hit by the earthquake, Gyumri, Shirak region
- Park construction in Hrazdan, Kotayk region
- Playgrounds construction in Charentsavan, Kotayk region
- Protective fence construction in Geghamavan village, Gegharkunik region
- Renovation of the Fine Arts and Decorative Applied Arts Studio-College, Yerevan
- Renovation of the Kanaker-Zeytun music school N1 after A. Ter-Ghevondyan, Yerevan
- Renovation of the Philharmonic school (Dance school), Yerevan
- Renovation of Yeghegnadzor House of Culture, Vayots Dzor region
- Renovation works in the kindergartens of Ajapnyak, Yerevan
- School renovation in Urtsadzor village, Ararat region
- Sponsoring the Golden Apricot Yerevan International Film Festival
- Support for shooting a film devoted to the Cilicia Armenia
- Support to Frityof Nansen Foundation
- Support to the 3rd Armenian microelectronics competition
- Support to the All-Armenian International Youth Center NGO
- Support to the Armenian Caritas
- Support to the Ashtarak chess federation
- Support to the Azatamartik patriotic charitable NGO
- Support to the Chess and Checkers Youth Olympic Sport school after H. Gasparyan, Yerevan
- Support to the Depi Hayk foundation
- The National Gallery 4th International Music Festival
- The Return FestivalWater pipeline installation in Artashavan village, Aragatsotn region
- Water pipeline installation in Khachik village, Vayots Dzor region
- Water pipeline installation in Movses village, Tavush region
- Water pipeline reconstruction in Verin Getashen village, Gegharkunik region
- And many other projects...

## Ուրցաձորի դպրոցի վերանորոգում

Արարատի մարզի Ուրցաձոր գյուղի միջնակարգ դպրոցում ուսանում է 500 աշակերտ: Սա գյուղի միակ դպրոցն է, որն արդեն երկար տարիներ գտնվում էր անմխիթար վիճակում: 2008թ.-ի ընթացքում ՎիվաՍել-ՄՏՍ-ը երկու անգամ առիթ ունեցավ այցելելու գյուղի դպրոց: Ուրցաձորցիների ապրումները աննկարագրելի էին, երբ սեպտեմբերի 1-ին՝ Գիտելիքի օրը, դպրոցականները մտնելու էին վերանորոգված, դպրոցական նոր գույքով կահավորված դասասենյակներ: Անցկացվել էր ջեռուցում, փոխվել էին դռներն ու պատուհանները: Երկրորդ այցելության ժամանակ՝ հոկտեմբերի 23-ին, ամբողջովին վերանորոգվել էր նաև դպրոցի տանիքը: Իսկ անցկացված գազատարն այժմ, դպրոցից բացի, սպասարկում է նաև ամբողջ Մարզպետունի թաղամասը:

Հիմա ուրցաձորցի երեխաները դասերի ժամանակ կմտածեն ոչ թե ցրտին դիմակայելու, այլ ուսանելու և մի օր կորպորատիվ քաղաքացի դառնալու մասին:

## The Urtsadzor Village School Renovation

The Urtsadzor village of Ararat region has one secondary school where 500 pupils study. The old structure of the building was in poor condition for many years. VivaCell-MTS visited the school of the village twice in 2008, on two different occasions. The villagers were indescribably cheerful and excited when on the 1st of September, the Day of Knowledge, their children entered fully renovated and newly furnished classrooms. Besides that, local heating system was installed; the doors and windows were changed. By the second visit on the 23rd of October, the rooftop of the school was also renovated. And the gas pipeline installed serves both the school and Marzpetuni district of the village where natural gas was never available before.

Now even in wintertime, the schoolchildren of the village will no longer suffer from cold and will be more eager to learn and become corporate citizens one day.


VIVA







## Խմելու ջրի համակարգ Փարպի և Ուշի գյուղերում

Սոցիալական վիճակի և կենցաղային պայմանների բարելավմանն ուղղված ծրագրեր այս տարի շատ են եղել: Սակայն Արագածոտնի մարզի Ուշի և Փարպի գյուղերում ՎիվաՍել-ՄՏՍ-ի հատկացրած միջոցներով կառուցված խմելու ջրի համապարփակ ցանցն առանձնահատուկ էր: Փարպի գյուղ մտնող մայր ջրատարի մոտ ՎիվաՍել-ՄՏՍ-ի ջանքերով կառուցվել է 50 մետր երկարությամբ մետաղական խողովակաշար: Բացի այդ, գյուղի համար կառուցվել է 1500 մետր երկարությամբ մետաղական խողովակաշար, ինչպես նաև 150 մետր երկարությամբ ներքին ցանց՝ ներառյալ 15 տարբեր տրամագծերով փականներ ու 120 միացման հանգույցներ: Ուշի գյուղի ներքին ջրամատակարարման նպատակով կառուցվել է 400 մետր երկարությամբ խողովակաշար:

Այժմ, ՎիվաՍել-ՄՏՍ-ի շնորհիվ, խմելու ջուրն այլևս ճոխություն չէ այս երկու գյուղերի բնակիչների համար:

## Drinking Water System in Parpi and Ushi Villages

There have been a lot of projects aiming at enhancing the social situation and conditions of life this year. But the initiative of installing an internal system of drinking water in the villages of Ushi and Parpi in Aragatsotn region with VivaCell-MTS support is vital and outstanding. A 50-meters long pipeline was constructed next to the base water pipeline entering the village of Parpi. In addition to that, a 1500-meters long pipeline was constructed for the village, with another 150-meters long pipeline for internal network purposes, including 15 valves of different size together with 120 knots. For the internal water supply system for Ushi, a 400-meters long pipeline was also constructed.

Clean drinking water is no longer a luxury for the people of these villages with VivaCell-MTS around.






## Խմելու ջրագիծ Արտաշավան գյուղում

Վիվասել–ՄՏՍ-ը, իր որդեգրած սոցիալական պատասխանատվության քաղաքականությանը հավատարիմ, շարունակում է իրականացնել Հայաստանի հասարակության համար երկարաժամկետ նշանակություն ունեցող ծրագրերի իրագործումը՝ ուղղված Հայաստանի մարզերի բնակչության կենսապայմանների բարելավմանը: Հայաստանի գյուղերում առկա են առանցքային ենթակառուցվածքների հետ կապված խնդիրներ, որոնցից առավել կարևորը խմելու ջրի հասանելիության ոչ բավարար մակարդակն է: Վիվասել–ՄՏՍ-ի շնորհիվ Արագածոտնի մարզի Արտաշավան գյուղում կառուցվել է 1600 մետր երկարությամբ խմելու ջրի խողովակաշար և ներքին ցանց:

Արտաշավանի 50 ընտանիքներ այսօր արդեն խմելու ջուր ունեն իրենց տներում:

## Drinking Water in Artashavan Village

Being socially responsible, VivaCell - MTS continues on implementing its large-scale CSR programs having long-term positive impact on the Armenian society, with a special focus on improving the quality of life of people living in the regions of Armenia. Armenian villages have problems with basic infrastructures, of which the most important is the insufficient level of drinking water supply. Thanks to VivaCell-MTS in 2008 a 1,600 meters long drinking water pipeline and internal water supply system were installed in Artashavan village.

50 families of Artashavan now have drining water in their homes.









## Մեծամորի բուժհամալիր

Առողջապահական խնդիրները, մանավանդ, երբ դրանք առնչվում են առաջնային առողջապահությանը, մշտապես պետք է լինեն պատասխանատու կորպորատիվ քաղաքացիների ուշադրության կենտրոնում: Այսօր էլ կան բուժհաստատություններ, որոնք ցրտաշունչ ձմռանը հասարակությանը սպասարկելու հնարավորություն չեն ունենում միայն այն պատճառով, որ հիվանդանոցը չի ջեռուցվում: Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի բուժհամալիրում լոկալ ջեռուցման և տաք ջրի մատակարարման համակարգ ներդնելու նպատակով ՎիվաՍել-ՄՏՍ-ը ներդրում կատարեց՝ քաղաքի բնակչության համար ավելի բարենպաստ բուժման պայմաններ ապահովելու համար: Բուժհամալիրն ընդգրկում է ութ մասնաշենք՝ 3615 քառակուսի մետր ընդհանուր տարածքով:

Այսօր մեծամորցիներն ավելի բարձրակարգ առողջապահական ծառայություններ են ստանում ջեռուցմամբ ու տաք ջրամատակարարմամբ ապահովված բուժհամալիրում:

## Metsamor Medical Center

Health care issues, especially in the sphere of primary health care, should always be kept in the forefront of a corporate citizen's mind. Even today there are medical centers which have no ability to provide health care services to the population during wintertime simply because there is no heating. VivaCell-MTS made a decision to allocate funds for the installation of a local heating and hot water supply system in the Medical Complex of Metsamor, Armavir marz, in order to increase accessibility and convenience of a wide range of health care services delivered in the Center. The medical center comprises 8 buildings, covering an area of nearly 3,671 sq meters.

Today the residents of Metsamor and neighboring areas are provided better health care services in the comfortable medical center with heating and hot water system.





## Հակակարկտային համակարգ Շենիկ գյուղում

ՎիվաՍել-ՄՏՍ-ը մշտապես եղել է հայ գյուղացու կողքին, իսկ գյուղական շրջաններում իրականացվող կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերը դրա ապացույցն են: Կարկուտը հանկարծակիի է բերում գյուղացուն և խոստանում անբերրի ու ոչ բարեկեցիկ տարի: Այս առումով ոչ բարենպաստ տեղանքում է գտնվում Արմավիրի մարզի Շենիկ գյուղը:

Տարեկան մի քանի անգամ տեղացող բնական աղետը կանխարգելելու համար ՎիվաՍել-ՄՏՍ-ի հատկացրած գումարով պատրաստվեցին և տեղադրվեցին 3 «Զենիթ» տիպի ակուստիկական հեռակառավարվող հակակարկտային կայաններ: Համակարգի հիմնական առավելությունն այն է, որ այն աշխատում է 3 շղթայով, իսկ 3 կայաններից յուրաքանչյուրն ապահովում է 10 կմ շառավղով տարածքի պաշտպանություն կարկուտից: Այնպես որ կարկտի վտանգի պայմաններում ապրող Շենիկի ու հարակից գյուղերի բնակիչներն այլևս չեն անհանգստանա իրենց բերքի համար:

## Anti-hail System in Shenik Village

VivaCell-MTS has been always supporting the villagers, and the Corporate Social Responsibility projects focusing on rural areas' development are the evidence of that. Hails during spring or summer season cause damage to young growth and lead to a disappointingly small crop. In this sense, Shenik village and neighboring villages are located in a very unfavorable location.

To prevent the natural evil happening frequently during a year, VivaCell-MTS provided funds for the construction and installation of a system of 3 Zenith remotely controlled acoustic anti-hail stations. The main advantage of this system is that it works with 3 chains, and the anti-hail areal coverage of each of the 3 stations is 10 km. So, Shenik and the neighboring villages, which were living with the threat of disaster, now have nothing to worry for the harvest.


ZENITH







## Սիսիանի գեղարվեստի դպրոց

Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում գործող Գեղարվեստի դպրոցը կառուցվել է 1968 թ.-ին ու մինչև այս տարի չէր վերանորոգվել: ՎիվաՍել-ՄՏՍ-ի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրի շրջանակներում իրականացվեց դպրոցի հիմնովին վերանորոգում. փոխվեցին բոլոր դռներն ու պատուհանները, վերանորոգվեցին մանրահատակը, աստիճանահարթակները, բազրիքները, սանհանգույցները, ինչպես նաև անցկացվեց ջեռուցում, իրականացվեցին միջնապատերի ամրացման, էլեկտրամոնտաժային, շենքի ճակատային մասի ու ներքին ներկարարական աշխատանքներ և այլն:

Դպրոցի ներկայացուցիչները համոզված են, որ վերանորոգումից հետո սաներն ավելի մեծ ոգևորությամբ են լծվելու ստեղծագործելու դժվարին գործին ու պատվով կներկայացնեն իրենց դպրոցը տարբեր ցուցահանդեսների ժամանակ:

## Sisian Fine Arts School

The School of Fine Arts in Sisian town of Syunik region was built in 1968 and didn't see any significant renovation since then. In the framework of VivaCell-MTS Corporate Social Responsibility projects the school was completely renovated; all the doors and windows were changed, the parquet was polished and newly varnished, the banisters, staircases and the rest rooms were renovated, also a local heating system was installed, the mid walls were strengthened, electrical montage was handled, internal and external painting and other works carried out.

Instructors of the Arts School are sure that after the renovation, in the environment of warmth and beauty, children will feel more excited about creating new pieces of artwork and will successfully present the school in various exhibitions.









## Դիլիջանի արվեստի դպրոց

Մեկ այլ լայնամասշտաբ վերանորոգման ծրագիր էլ այս տարի ավարտին հասցվեց առողջարանային Դիլիջան քաղաքում: Դիլիջանի արվեստի դպրոցը, որ կրում է անվանի գեղանկարիչ Հովհաննես Շարամբեյանի անունը, չէր վերանորոգվել կառուցման օրվանից (1970թ.) և հայտնվել էր անմխիթար վիճակում: Խարխլված տանիքով ու բեմով դպրոցն ի վերջո աջակցության խնդրանքով դիմեց ՎիվաՍել-ՄՏՍ-ին:

Իսկ ՎիվաՍել-ՄՏՍ-ը միշտ պատրաստ է աջակցելու մշակույթի զարգացմանը: Դպրոցի շենքը հիմնովին վերանորոգվեց. իրականացվեցին բեմի, սանհանգույցների, տանիքի և շենքի ճակատային հատվածի վերանորոգման աշխատանքներ, ինչպես նաև անցկացվեց ջեռուցման համակարգ:

Շենքի արտաքին ու ներքին հիմնովին վերանորոգումը նոր կյանք տվեց դպրոցին: Վերաբացվում են նախկինում գործող մի շարք ստեղծագործական խմբակներ: Այս ճանապարհով է, որ զարգանում է ազգային մշակույթն ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքային համայնքներում:

## Dilijan Arts School

Another large renovation project was completed this year in Dilijan, a popular resort town. Dilijan Arts School named after the outstanding artist Hovhannes Sharambeyan, was not renovated since the date of its foundation in 1970. As a result, the Arts School was in crumbling condition. Crying for attention, with broken roof tiles, and cracks on the stage, the school turned to VivaCell-MTS for support.

And VivaCell-MTS, the culture friend, is always ready for support. The school underwent complete renovation that included the stage, the rest rooms, the rooftop and the facade of the building. On top of that, a heating system was also installed.

The total interior and exterior renovation of the school marked its new beginning. Several creative and hobby groups active in the past received a new boost. That is how the culture of any nation is developed in both rural and urban communities









## Խաչիկ գյուղում իրականացված ծրագրեր

Վայոց Ձորի Խաչիկ գյուղում ՎիվաՍել-ՄՏՍ-ը 2008թ.-ի ընթացքում իրականացրել է մի շարք ծրագրեր: Սեպտեմբերի 12-ին ընկերության ներկայացուցիչները այցելեցին Խաչիկ՝ կատարված աշխատանքների արդյունքները տեսնելու նպատակով:

ՎիվաՍել–ՄՏՍ-ն իր կորպորատիվ սոցիալական պատասխանատվության քաղաքականության շրջանակներում օգնեց Խաչիկ գյուղի 4 կարիքավոր ընտանիքների՝ իրականություն դարձնել սեփական տուն ունենալու իրենց երազանքը: Եվս մեկ կարևոր ծրագիր կապված է գյուղում 1400 մետր երկարությամբ խողովակի և 28 բաշխիչ հանգույցներով ու 2400 մետր երկարությամբ ջրամատակարարման ներքին ցանցի կառուցման հետ: Բացի այդ, գյուղին տրամադրվեց շտապ օգնության ամենագնաց մեքենա գյուղական ամբուլատորիայի համար: Եվ վերջապես, միջոցներ հատկացվեցին գյուղի երեխաների համար 1000 քառակուսի մետր մակերեսով խաղահրապարակ ու լողավազան կառուցելու, ինչպես նաև տարածքը կանաչապատելու նպատակով:

## Projects in Khachik Village

In Khachik village, Vayots Dzor region, VivaCell-MTS has accomplished several projects during 2008. On September 12 the Company representatives visited the village to observe the results of those projects.

VivaCell-MTS, within its Corporate Social Responsibility agenda, helped 4 needy families make their dreams come true. The families gladly moved into their new houses. That was a step towards motivating them to stay close to home by working and living in the motherland. In addition to that a 1,400 meters long drinking water pipeline was built with a 2,400 meters long internal distribution network and respective 28 distribution centers. Besides, the village was provided with an off-highway ambulance to serve the rural ambulatory. And finally, VivaCell-MTS made a nice present for the village children – provided funds for building a playground and a swimming pool occupying an area of more than 1,000 square meters, with greenery planted around it.









## Եղեգնաձորի մշակույթի տուն / ամֆիթատրոն

Վիվասել-ՄՏՍ-ի այս տարի իրականացրած խոշորագույն ծրագիրը՝ Եղեգնաձորի մշակույթի տան վերանորոգումը, ներառում էր ոչ միայն շինության ներքին հարդարանքի աշխատանքներ՝ բեմի վերանորոգում, էլեկտրամոնտաժային աշխատանքներ, կահույքի ձեռքբերում, ջեռուցման համակարգի անցկացում, դռների, պատուհանների փոխում, սանհանգույցների ամբողջական վերանորոգում, այլ նաև ասֆալտապատում և ճակատային պատի վերանորոգման աշխատանքներ: Բացի այդ, հիմնովին վերանորոգվել է մշակույթի տանը կից ամֆիթատրոնը:

Եղեգնաձորի մշակույթի տան համբավը ժամանակին տարածված էր ամբողջ Վայոց ձորում: Այստեղ հանդես են եկել ժամանակի հայտնի երգիչներն ու դերասանները: Այժմ, երբ եղեգնաձորցիներն ունեն վերակառուցված ամֆիթատրոն, քաղաքն ավելի հրապուրիչ կդառնա մշակույթի գործիչների համար, և Վայոց ձորի մարզկենտրոնում կյանքը կրկին հագեցած կլինի մշակութային իրադարձություններով:

## Yeghegnadzor House of Culture / Amphitheatre

The biggest project of VivaCell-MTS accomplished this year, the renovation of the House of Culture in Yeghegnadzor, Vayotz Dzor region, included renovation of the stage, electricity montage, furnishing, local heating system installation, changing all doors and windows, complete renovation of rest rooms, asphalt laying, as well as the reconstruction of the front wall. In addition to all the abovementioned, the amphitheatre located in front of the House of Culture, was completely renovated.

Yeghegnadzor house of culture was previously famous all over Vayotz Dzor region. Well-known artists and singers performed there. Today, when there is a newly rebuilt amphitheatre in Yeghegnadzor, the town will be more exciting and inviting for artists. The center of Vayotz Dzor region will live a new life abundant with cultural events.









## Օձունի արվեստի դպրոց

Արվեստը երեխաների համար մայրենի լեզու է ու նրանց ստեղծագործական ունակությունների բացահայտման միջոց: Արվեստի հետ շփում ունեցող երեխաներն ավելի շատ հնարավորություն ունեն դառնալու ստեղծագործ, ինքնավստահ ու խելացի անհատականություն:

Օձունի արվեստի դպրոցը հիմնադրվել է 1970 թ.-ին և ունի դաշնամուրի, լարային, փողային ու ժողովրդական գործիքների, ինչպես նաև նկարչական խմբակներ: Տարիներ շարունակ Հայաստանում արվեստի դպրոցների համակարգն անուշադրության էր մատնված: Այդ իսկ պատճառով, ՎիվաՍել-ՄՏՍ-ը հատուկ ուշադրություն է դարձնում երեխաների տաղանդը բացահայտելուն ուղղված ծրագրերին: Ընկերության աջակցությամբ Օձունի արվեստի դպրոցը հիմնովին վերանորոգվեց ու կահավորվեց: Դպրոցն այժմ ունի ջեռուցման ու տաք ջրամատակարարման նոր համակարգ ու հիմնովին վերանորոգված տանիք: ՎիվաՍել-ՄՏՍ-ի աջակցությունն Օձուն գյուղին չսահմանափակվեց արվեստի դպրոցի վերանորոգմամբ: Ընկերությունն Օձունի գյուղապետարանին տրամադրեց նաև նոր աղբատար մեքենա:

ՎիվաՍել-ՄՏՍ-ն աջակցում է երեխաների էսթետիկական կրթությանը, քանի որ այս կերպ է, որ զարգանում է երեխաների երևակայությունն ու, ի վերջո, ստեղծվում են արվեստի գլուխգործոցներ:

## Odzun Arts School

Art is a native language for children and a powerful tool for nurturing every child's innate creativity. Children exposed to the arts have a better chance to grow up to be more creative, expressive, confident, self-reliant and critically thinking adults.

Odzun's Arts School was founded in 1970 and includes the following sections: piano, string, wind, folk instruments, and a painting class. For many years the system of arts schools in Armenia was in decline. Therefore, VivaCell-MTS is supporting programs that help children to discover their talents as when a child's creativity is not encouraged it may be lost forever. Arts School of the Odzun village is completely renovated and refurbished thanks to the company's contribution. The school now has a new local heating and hot water supply system, and a completely new rooftop. The company also presented the administration of the village with a garbage-collecting vehicle.

VivaCell-MTS invests in the aesthetical education of children because it helps children develop their imagination and skills to create masterpieces of art.









## Ալավերդու մանկապարտեզ

ՎիվաՍել-ՄՏՍ-ի ներկայացուցիչներին Ալավերդու թիվ 11 մանկապարտեզում վաղուց էին սպասում: Մանկապարտեզի շենքը, որ 1974 թ.-ի կառույց էր, երբևէ չէր վերանորոգվել, ավելին` երկրաշարժի հետևանքներն անդառնալիորեն խարխլել էին այն: Արդյունքում ընդամենը 65 երեխայի համար գործող մանկապարտեզը ավելի շատ ավերակներ էր հիշեցնում, քան մանկական հաստատություն: ՎիվաՍել-ՄՏՍ-ի տրամադրած միջոցներով մանկապարտեզը հիմնովին վերանորոգվեց, փոխվեցին տանիքը, դռներն ու պատուհանները, ինչպես նաև անցկացվեց ջեռուցման համակարգ:

Ալավերդու երեխաներն այժմ ավելի հաճույքով են հաճախում մանկապարտեզ անգամ ձմռան ցուրտ ամիսներին: Այսօր արդեն վերանորոգված ու տաք մանկապարտեզի սաների թիվը կտրուկ աճել է, և երեխաներն ավելի շատ բան կարող են հիշել իրենց սիրելի մանկապարտեզի մասին:

## Kindergarten in Alaverdi

Children and staff of the kindergarten N11 in Alaverdi were waiting impatiently for VivaCell-MTS representatives. The kindergarten house, built in 1974, had not seen renovation since the very day of its foundation. Moreover, the earthquake caused damage to the structure of the building. As a result, the building was not safe and comfortable enough for children. VivaCell-MTS funded the renovation of the kindergarten including installation of the local heating system and changing all the doors and windows. Besides, the company carried out major interior renovations including renovation of the rooftop.

The children enjoy their new environment, and thanks to the local heating system they gladly attend the kindergarten even during cold winter months. The number of children in the kindergarten has grown rapidly since its renovation, and thanks to VivaCell-MTS they will leave the kindergarten with warm and happy memories









## Չարենցավանի խաղահրապարակներ

«Առողջ մարմնում՝ առողջ ոգի», սա է կորպորատիվ քաղաքացու որդեգրած սկզբունքը: Հենց այս սկզբունքով էլ Չարենցավանում, իր կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրի շրջանակներում, ՎիվաՍել-ՄՏՍ-ն աջակցեց 3 սպորտային խաղահրապարակների կառուցմանը՝ ստեղծելով հնարավորություն քաղաքի երեխաների համար զբաղվելու սպորտով ու հանգստանալու: Շնորհակալ չարենցավանցիները ոգևորությամբ ընդունեցին իրենց մատուցված նվերը:

ՎիվաՍել-ՄՏՍ-ի շնորհիվ երեխաներն իրենց ազատ ժամանակի զգալի մասը կտրամադրեն մարզումներին, ինչի շնորհիվ, նաև հեռու կմնան վնասակար սովորություններից: Եվ գուցե մի օր Հայաստանի օլիմպիական հավաքականների կորիզը հենց այս քաղաքից լինի:

## Playgrounds in Charerntsavan

"A sound mind in a sound body" – this is the principle of a corporate citizen. That's why VivaCell-MTS decided to provide funds for building playgrounds in 3 districts of Charentsavan with the goal to promote sports and at the same time to create a place for recreation for teenagers. Thankful citizens of Charentsavan took the gift with happiness.

Thanks to VivaCell-MTS, young people will devote a significant portion of their time doing sport exercises to become physically fit and keep away from unhealthy practices. And hopefully, one day the representatives of Charentsavan will make up the core of Armenia's national Olympic team.









## Էլեկտրաէներգիա Յանըղ, Քարվանսարա և Փոքր Աստղաձոր գյուղերում

Սեպտեմբերի 25-ը Գեղարքունիքի մարզի 3 համայնքների պատմության մեջ հիշարժան օր է՝ նոր, լուսավոր ու ավելի թեթև կյանքի սկիզբ:

ՎիվաՍել-ՄՏՍ ընկերությունը, շարունակելով գործնական քայլեր կատարել Հայաստանի բնակչության կյանքի որակի բարելավման ուղղությամբ, որոշում կայացրեց ձեռք մեկնել արդեն 15 տարի առանց էլեկտրականության ապրող Յանըղ, Քարվանսարա և Փոքր Աստղաձոր համայնքներին: Գտնվեց հնարամիտ լուծում. երեք գյուղերը միացվեցին հանրապետական էլեկտրական ցանցին ՎիվաՍել-ՄՏՍ-ի երեք բազային կայանները սնուցող էլեկտրահաղորդակների միջոցով: Բազային կայաններից դեպի գյուղեր 1620մ երկարությամբ բարձրավոլտ մալուխներ անցկացվեցին, ինչի համար բազային կայաններից մինչև գյուղեր տեղադրվեցին 56 սյուներ: Յանըղ և Քարվանսարա գյուղերում էլեկտրականություն է ապահովվելու Յանըղում, իսկ Փոքր Աստղաձորում՝ Սելիմի լեռնանցքի մոտ գտնվող բազային կայաններից:

ՎիվաՍել–ՄՏՍ-ը նաև առանձին ենթաէլեկտրակայաններ կառուցեց յուրաքանչյուր գյուղի համար: Արդյունքում հնարավոր դարձավ ապահովել 203 ընտանիքների ավելի բարեկեցիկ կյանքը:

## Electricity Supply in Yanegh, Karvansara and Pokr Astghadzor Villages

September 25 marked the beginning of a new age in the history of 3 villages in Gegharkunik - Yanegh, Karvansara and Pokr Astghadzor, where thanks to VivaCell-MTS a new, illuminated and much easier life started.

VivaCell – MTS, as a responsible corporate citizen, keeps on seeking fair treatment to citizens across Armenia, to ensure better quality of life. Thus, a decision was made to extend Company's helping hand to the residents of Yanegh, Karvansara and Pokr Astghadzor who were living in the dark, without electricity, for more than 15 years. A smart solution was found: the three villages were connected to the national electrical network through electricity transmission devices feeding three Base Transceiver Stations of VivaCell-MTS. In addition to that, 1620 meters of high-voltage power lines were laid on 56 specially-erected wooden poles stretching from the BTS sites to each respective village. The first Base Station located near Yanegh supplies electricity to Yanegh and Karvansara, and the other one located near Selim Mountain Pass supplies Pokr Astghadzor.

VivaCell-MTS also built substations for the three villages to ensure proper electricity supply and distribution. As a result, 203 families now can make their lives better.







## Գեղամավանի արգելապատնեշ

Հրազդան գետը հոսում է Գեղամավանի միջով և անցնում է գյուղի խիտ բնակեցված տարածքով: Նախկինում այստեղ եղել է բնակելի մասը գետից զատող ցանկապատ, սակայն տարիների ընթացքում այն շարքից դուրս էր եկել և դարձել մի քանի տասնյակ մարդկային զոհերի պատճառ: Քիչ չէին նաև նյութական վնասները՝ գետն ընկած մեքենաներ ու անասուններ:

ՎիվաՍել-ՄՏՍ-ը, որ կորպորատիվ քաղաքացուն հատուկ հոգացություն է ցուցաբերում մարդու կյանքի և անվտանգության նկատմամբ, միջոցներ հատկացրեց նոր և ամուր արգելապատնեշ կառուցելու համար:

Գյուղացիներն այսօր վստահ են, որ նույնիսկ ձմռանը, երբ ճանապարհները սառցակալվում են, և օրն էլ շուտ է մթնում, այլևս կարիք չկա անհանգստանալու, քանի որ չարաբաստիկ հունն այլևս մարդկային զոհերի պատճառ չի դառնա:

## Protective Fence in Geghamavan

The Hrazdan River flows through an artificial channel laid across Geghamavan village through its densely populated territory. Previously there was a protective fence separating the river banks from the village, but it was almost destroyed. The deteriorated fence was unable to prevent 67 casualties resulting in death of people over the last thirty years. Several cars and a lot of cattle fell down into the river causing considerable material losses.

Armenian citizens' safety is one of the main worries of VivaCell-MTS. Therefore, in order to provide security and safety to the village residents, protective structures including an outer abutment wall and nets were constructed in the place where the Hrazdan River adjoins to the village Geghamavan.

Today the villagers are sure, that even during wintertime, when the roads are frozen and it gets dark early, there is no need to worry as the dreadful channel is not threatening anymore.









## «Ոսկե ծիրան» Երևանի միջազգային կինոփառատոն

Ֆիլմն ունի իր ուրույն լեզուն, որն ավելին է, քան տեսանելի աշխարհի ու պատկերների պարզ վերարտադրությունը: Ֆիլմը, նախ և առաջ, բացահայտում է խորքում թաքնվածը: Ֆիլմն այն միջոցն է, որը հնարավորություն է տալիս կրթելու՝ առանց տեղեկություններով ծանրաբեռնելու:

Արդեն 3 տարի է՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ն աջակցում է «Ոսկե ծիրան» Երևանյան միջազգային կինոփառատոնի կազմակերպմանը՝ ձեռք մեկնելով փառատոնի կազմակերպիչներին՝ առաջ տանելու գաղափարներ, որոնք բերում են նոր նվաճումների: «Ոսկե ծիրան» փառատոնն իր ուրույն տեղն ունի համաշխարհային կինոարվեստում՝ աշխարհին ներկայացնելով հայերի ստեղծագործ ոգին ու նրանց կամքը՝ հասնելու նոր բարձունքների՝ հաղթահարելով խոչընդոտները, սահմանելով բարձր չափանիշներ և ձգտելով հասնել նպատակներին:

Աջակցությունը մշակույթի տարբեր ոլորտների՝ այդ թվում կինոյի զարգացմանը, ՎիվաՍել-ՄՏՍ-ի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության քաղաքականության անբաժանելի մասն է: «Ոսկե ծիրան»-ի շնորհիվ Հայաստանն աշխարհին է ներկայանում որպես իր ուրույն մշակութային ինքնությունն ունեցող երկիր: Այս սքանչելի միջոցառումը մի երկնակամարի տակ է համախմբում կինոարվեստի լավագույն նմուշները՝ երևան հանելով ամենագեղեցիկը, որ պարփակված է կինոարվեստում: «Ոսկե ծիրան»-ի կազմակերպիչները ջանք չեն խնայել՝ հայ հանդիսատեսին ներկայացնելու համաշխարհային արժեքներ տարածող լավագույն ֆիլմերը: «Ոսկե ծիրանի»-ի շնորհիվ Հայաստանում վերջին տարիներին զգալիորեն աճել է հետաքրքրությունը այս հզոր արվեստի՝ կինոյի նկատմամբ:

## Golden Apricot Yerevan International Film Festival

Film is considered to have its own language, and is more than just capturing and reproducing images of the visual world. Above all, films uncover what is hidden from view, beneath many layers. Besides being a source of popular entertainment, film is also a powerful method for educating people without information overload.

For the third time in a row VivaCell-MTS makes its contribution to the organization of Golden Apricot Yerevan International Film Festival and joins hands with organizers of the Festival in giving rise to ideas that result in Armenian achievements. Golden Apricot has marked its presence on the international scene promoting the creativity of Armenians and their will to advance towards new horizons challenging all obstacles, setting the ceiling high and striving to meet the objectives.

Comprehensive support of VivaCell-MTS to the development of different areas of culture, including cinema, is built in the company's CSR vision. Through Golden Apricot, Armenia appears before the world as a country having its own and unique cultural identity. This marvelous event brings together masterpieces of cinema from many countries and cultures, thus revealing the whole beauty and creativity expressed in the cinematographic art. The most delicate, interesting and serious films are made available to Armenian film-lovers by organizers of the festival. Thanks to Golden Apricot Armenia sees increasing interest towards cinema and film-making.









## Ձեռք ձեռքի՝ հանուն բնության

Շրջակա միջավայրի պահպանությունն իր առաքելության մի մասը համարելով՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ը մշտապես համագործակցել է «Հայաստանում Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի» հետ:

Գործընկերության նպատակն է հայ հասարակության մեջ զարգացնել բնապահպանական պատասխանատվության կարևորության գիտակցումը:

Բնապահպանական միջոցառումները ներառում են այնպիսի իրադարձություններ, ինչպիսիք են «Արևորդի» տարածաշրջանային առաջին բնապահպանական փառատոնը, շարունակական կրթական ծրագրերը՝ այդ թվում էկոակումբների ստեղծում և մասնակցություն հեղինակավոր բնապահպանական կինոփառատոնների, բնապահպանական թեմաներով կինոյի ու լուսանկարչական դասընթացներ, ծառատունկի և աղբահավաքման կազմակերպում, բնապահպանական հեծանվարշավի անցկացում, մանկական գեղանկարչական մրցույթ, առանձին դպրոցներում իրականացվող կրթական ծրագրեր, ինչպես նաև մի շարք այլ իրազեկության բարձրացման ու կրթական ծրագրեր՝ ուղղված հասարակության բնապահպանական պատասխանատվությունը բարձրացնելուն:

## Joining Hands for Nature

Protecting the environment is a core concern for VivaCell-MTS, and as a keen supporter of environmental cause, the company has been the major partner of the environmental initiatives of the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets (FPWC) in the Republic of Armenia.

The aim of the partnership is to spur Armenian society to recognize the importance of environmental responsibility.

Environmental activities encompass such events as the first regional environmental festival Sun Child, continuous educational programs, such as creation of eco clubs, participation in prestigious environmental film festivals, trainings on filmmaking and photography on environmental themes, tree-planting and garbage-collecting, environmental bike-riding, exhibitions, training programs launched in selected secondary schools, children's painting competition, as well as many other community outreach and education efforts aimed at encouraging the public to assume environmental responsibility.







Viva



Save the
Nature

## Գառնու արվեստի դպրոցի նոր հեռանկարները

Գառնու և հարակից գյուղերի սաները այցելում են տեղանքում միակ արվեստի դպրոցը: Այս շնորհալի երեխաներից շատերը մասնակցել են բազմաթիվ ցուցահանդեսների՝ բարձր պահելով իրենց դպրոցի անունը: Սակայն դեռ վերջերս դպրոցի շենքը գտնվում էր անմխիթար վիճակում: ՎիվաՍել-ՄՏՍ-ի հատկացումների շնորհիվ Գառնու արվեստի դպրոցում փոխվեցին բոլոր դռներն ու պատուհանները, անցկացվեց լոկալ ջեռուցման համակարգ, կառուցվեց կաթսայատուն, վերանորոգվեցին աստիճանահարթակները, տանիքը, շինության առաջին հարկն ամբողջությամբ, իրականացվեցին ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ: Հիմնովին վերանորոգվեց շենքի ձեղնահարկը, ինչը հնարավորություն կտա նաև այդ հարկում կազմակերպելու դասեր:

Շուտով Գառնու արվեստի դպրոցում գործող չորս խմբակներին կավելանան ևս մի քանիսը, քանի որ հիմա շենքային պայմանները տալիս են այդ հնարավորությունը:

## New Perspectives for Garni Arts School

Children of Garni and neighboring villages attend the Arts School of Garni. Many of these talented children have participated in different exhibitions glorifying the name of their Arts School. However, till recently the school was in a very bad condition. With VivaCell-MTS allocations all the windows and doors were changed, local heating system was installed, a boiling-house was built, stairwells, rooftop, the first floor of the building were renovated, as well as internal and external redecoration was carried out. The garret was completely rebuilt, which gives opportunity to have there classes also.

Soon, some new hobby groups will be added to the acting four, as now all the conditions are in place and the school is well-suited for future study and creative work.









## «Վերադարձի» փառատոն

Արդեն երկրորդ տարին է, որ ՎիվաՍել-ՄՏՍ-ը Արվեստների պատկերասրահի մշակութային հիմնադրամի և գերմանական VILS փառատոնի հետ համատեղ կազմակերպում է «Վերադարձի» դասական երաժշտության փառատոնը Երևանում: «Վերադարձի» անվանումը խորհրդանշում է փառատոնի նպատակը. մեկ հարկի տակ միավորել այն հայ դասական երաժիշտներին, ովքեր վերջին երկու տասնամյակների ընթացքում մեկնել են հայրենիքից և ստեղծագործում են արտասահմանում:

Այսօր նրանք համախմբվում են՝ խթանելու դասական երաժշտության հայկական ոգու զարգացումը: Դասական երաժշտության հայ սիրահարները փառատոնի շրջանակներում հնարավորություն են ունեցել ունկնդրելու Սերգեյ Խաչատրյանին, Իրինա Հովհաննիսյանին, Կորյուն Ասատրյանին, Լուսինե Խաչատրյանին, Կարեն Արությունյանին, Լևոն Մուրադյանին, Նարինե Ավակյանին, Գայանե Շարլույանին, Վահան Մարտիրոսյանին, Վլադիմիր Խաչատրյանին և այլոց:

## The Return Festival

This is the second year that VivaCell-MTS together with Gallery of Arts Cultural Fund and VISL German Festival is organizing the Return classical music festival in Yerevan. The name chosen for the festival "Veradardz" (The Return) is to symbolize the aim of the festival - to bring together under one roof those Armenian classical musicians who have left for other countries during the last two decades.

The festival joins them to push for the development of Armenian spirit in classical music. Lovers of classical music in Armenia were given the opportunity to enjoy concerts by Sergey Khachatryan, Irina Hovhannisyan, Koryun Asatryan, Lusine Khachatryan, Karen Aroutiounian, Levon Mouradyan, Narine Avakyan, Gayane Sharluyan, Vahan Mardirossian, Vladimir Khachatryan and other outstanding musicians.









## «Ազգային պատկերասրահի» երաժշտական փառատոն

«Ազգային պատկերասրահի» երաժշտական փառատոնի յուրահատկությունը կայանում է նրանում, որ այստեղ ներկայացվում է տարբեր դարաշրջանների ու մշակույթների դասական երաժշտություն, և այս ամենը տեղի է ունենում միջնադարյան արվեստի գլուխգործոցների միջավայրում՝ մեծապես աշխուժացնելով Հայաստանի մշակութային կյանքը: Ահա թե ինչու ՎիվաՍել-ՄՏՍ-ը, շարունակելով հայ մշակույթին սատարելու իր ավանդական գործելակերպը, արդեն չորրորդ անգամ հպարտությամբ ստանձնում է փառատոնի գլխավոր հովանավորի պատասխանատվությունը: ՎիվաՍել-ՄՏՍ-ը, բարձր գնահատելով փառատոնի կազմակերպիչների ստեղծագործ մոտեցումն ու ոգևորությունը դասական երաժշտության փառատոնի այս յուրահատուկ գաղափարի իրագործման հարցում, պարտավորվում է շարունակել աջակցել դասական երաժշտության սիրահարների համար կազմակերպվող նմանատիպ մշակութային նախաձեռնություններին:

## National Gallery Music Festival

The uniqueness of the National Gallery Classical Music Festival is that it features world classical music spanning centuries and cultures, and is doing this in the inspiring environment of medieval fine arts, adding to the diversity of cultural life in Armenia. That is the reason why VivaCell-MTS, a company committed to supporting the preservation of Armenian culture, becomes the General Sponsor of the Festival fourth time in a row. Highly appreciating the organizers' creative approach and inspiration in bringing to life the wonderful idea of the classical music festival, VivaCell-MTS confirms its commitment to continue supporting all those cultural initiatives that serve the diverse and sophisticated Armenian audience of classical music lovers through producing a broad and varied repertoire of wonderful classical music performances.









## Հատուկ վերաբերմունք նորածիններին և նրանց մայրերին

Մանկական մահացության ցուցանիշը Հայաստանում ժամանակակից աշխարհի համար համարվում է բարձր՝ միջինում 17-ը 1000 երեխայի հաշվով: Երեխաների և նրանց մայրերի կյանքը փրկելու հավանականությունն ավելի մեծ է համապատասխան ժամանակակից սարքավորումների առկայության դեպքում:

ՎիվաՍել-ՄՏՍ-ը, լինելով պատասխանատու կորպորատիվ քաղաքացի, մեծ ուշադրություն է դարձնում երեխաների և մայրերի առողջությանը: Այսպես, թույլ կամ առողջական խնդիրներ ունեցող նորածինների ապաքինման հավանականությունը մեծացնելու նպատակով, Մոր և մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոնի համար ընկերությունը ձեռք է բերել ինտենսիվ թերապիայի՝ մանուկների համար նախատեսված ժամանակակից սարքավորում:

Կոնքազդրային հոդի զարգացող դիսպլազիան՝ հոդախախտը, խնդիր է, որ կարող է ծագել ցանկացած երեխայի մոտ: Այս ծանր հիվանդության վաղ ախտորոշումը հնարավորություն է տալիս կանգնեցնելու հիվանդության զարգացումը, որը կարող է ցմահ հաշմանդամության բերել: ՎիվաՍել-ՄՏՍ-ի ներդրման շնորհիվ ձեռք է բերվել նաև հատուկ ուլտրաձայնային սարք, որի միջոցով հնարավոր է պարզել՝ արդյոք նորածինն ունի նման հիվանդություն, թե ոչ: Ապագայում, երբ բոլոր նորածիններն անցնեն այդ ստուգումը, հնարավոր կլինի ունենալ ավելի առողջ սերունդ:

## Special Attitude to Infants and their Mothers

Infant mortality rate is considered to be high in Armenia in comparison with modern world: in average 17 out of 1000. The probability to save lives of babies and their mothers grows in case proper modern equipment is available.

Being a responsible corporate citizen, VivaCell-MTS pays huge attention to the children's and mothers' healthcare. Thus, to increase the recovery chances of weak infants or children with disabilities, a special modern intensive care cot for babies was purchased for the Scientific and Research Center of Maternal and Child Health Protection.

Developmental dysplasia of hip is a problem which can occur to each infant. Early detection of this tough disease makes it possible to stop the development of the disease that can cause a lifelong disability. With VivaCell-MTS contribution, special ultrasound equipment was also acquired, which makes it possible to find out if the baby has such a disease. In future, when all the newborns pass this screening, a healthier generation will grow.







## Մովսես գյուղի նորակառույց մանկապարտեզը

Տավուշի մարզի Մովսես սահմանամերձ գյուղի մանկապարտեզը 90 քմ տարածքով հողաշեն մի կառույց էր, որ հիշեցնում էր վաղ միջնադարը: Մանկապարտեզը վթարային էր, բայց չնայած դրան, ծնողները երեխաներին ճարահատյալ ուղարկում էին այդ հաստատություն: ՎիվաՍել-ՄՏՍ-ը, լրջագույն պատասխանատվություն զգալով հատկապես մանուկների ու նրանց ապագայի հանդեպ, իր կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրի շրջանակներում գումար հատկացրեց՝ կառուցելու բոլորովին նոր, ավելի ընդարձակ մանկապարտեզ՝ նախատեսված 50 երեխայի համար (300 քմ տարածքով): Կատարվեցին ընդհանուր շինարարական աշխատանքներ՝ սկսած հիմքի աշխատանքներից, վերջացրած տանիքի կառուցմամբ: Իրականացվեցին նաև ներքին հարդարման աշխատանքներ՝ այդ թվում դռների և պատուհանների տեղադրում, ջրատար, կոյուղու և ջեռուցման համակարգերի անցկացում, էլեկտրամոնտաժային, ներկարարական աշխատանքներ, մանրահատակի տեղադրում, ինչպես նաև ֆասադային աշխատանքներ:

Այժմ Մովսես գյուղի երեխաները հնարավորություն ունեն հաճախելու ժամանակակից մանկապարտեզ և վայելելու մանկությունը ավելի ապահով ու հարմարավետ պայմաններում:

## The New Kindergarten of Movses Village

The kindergarten of the border village of Movses in Tavush region, was an earthen building with an area of 90 sq meters resembling the Dark Ages. It was nearly destroyed. However, seeing no way out, parents were taking their children to that institution. As VivaCell-MTS Corporate Social Responsibility has a special focus on children, the company allocated funds for building a new and bigger (300 sq meters) kindergarten designed for 50 children. General construction works were accomplished, starting from the building foundation and finishing with rooftop construction. Also interior decoration and furnishing works were carried out: doors and windows were put in, water and sewerage pipelines, as well as a local heating system were installed, electrical montage works were carried out, walls were painted, parquet laid and also some exterior decoration works were completed.

Now the children of Movses village have an opportunity to attend a modern kindergarten and to enjoy their childhood in safer and more comfortable conditions.









## «Ճանաչեք հայկական հուշարձանները»

Մշակույթը մեծապես պայմանավորում է ազգային ինքնությունը: Պահպանելով մշակույթը՝ մենք կարող ենք մեր ժառանգությունը փոխանցել ապագա սերունդներին: Մշակութային արժեքների և ընդհանրապես մշակույթի պահպանությունը բոլորի պարտքն է, այս սկզբունքով է առաջնորդվում ՎիվաՍել-ՄՏՍ-ը՝ նմանատիպ ծրագրերին աջակցելիս:

Այս տարի, համագործակցելով ՀՀ մշակույթի նախարարության հետ, ՎիվաՍել-ՄՏՍ-ը, Հայկական հուշարձանների ճանաչման ծրագիր մշակութային հասարակական կազմակերպությունը, Գյումրի քաղաքում Իտալիայի պատվավոր հյուպատոս Անտոնիո Մոնտալտոն և USAID/CAPS-ը «Ճանաչեք հայկական հուշարձանները» ծրագրի շրջանակներում տեղեկատվական վահանակներ և ուղեցույցներ են տեղադրել Գառնու և Զվարթնոցի տաճարների հարևանությամբ, Գյումրիի պատմական միջուկում, Նորավանքում, ինչպես նաև Խոր Վիրապում և Հին Արտաշատի հնագիտական պեղումների վայրում:

Լինել կորպորատիվ քաղաքացի նշանակում է խորապես գնահատել մշակույթը, որն ընկած է ցանկացած զարգացման հիմքում:

## Recognize the Armenian Monuments project

Culture is reinforcing national identity. By preserving the culture, we are able to pass on our heritage to future generations. Keeping the culture alive and preserving our cultural values is everyone's duty – this is the main principle of VivaCell-MTS for supporting this kind of projects.

This year, in the framework of the Recognize the Armenian Monuments project, in cooperation with the Ministry of Culture of Armenia VivaCell-MTS, Armenian Monuments Awareness Project (AMAP) cultural NGO, Antonio Montalto - the Honorary Consul of Italy in Gyumri and USAID/CAPS jointly installed open-air multilingual informative panels, directional signs and markers near Garni and Zvartnots temples, in historical center of Gyumri, Noravank, Khor Virap and the sights of archeological diggings in Old Artashat.

Being a corporate citizen is committing to deeply value the culture which is at the core of any development






NORAVANK
НОРАВАНК

## Նոր բնակարաններ երկրաշարժից տուժած ընտանիքներին

Երկրաշարժին հաջորդող 20 երկար ու ձիգ տարիներ. տարիներ, որոնք իրենց հետևում են թողնել բազմաթիվ մարդկանց կյանքեր, խարխուլ կացարաններ, դժվարին կենցաղ... Տարիներ, որոնք հիմա անցյալում են: Դրանց փոխարինել է ապագայի հանդեպ լավատեսությունն ու հավատը: Հավատ, որ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հիմքն է: Գյումրի քաղաքում մի շարք ընտանիքներ, որ նախկինում բնակվում էին տնակներում, ՎիվաՍել-ՄՏՍ-ի սոցիալական ներդրմամբ կարողացան բացել կյանքի նոր էջ՝ ստանալով իրենց նոր բնակարանների բանալիները:

Իր կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում, որն առանձնացնում է ՎիվաՍել-ՄՏՍ-ին Հայաստանում գործող մյուս բոլոր կազմակերպություններից, ընկերությունն այսպիսի նախաամանորյա նվեր մատուցեց հենց նրանց ովքեր ամենաշատն էին զգում դրա կարիքը: Այժմ այս ընտանիքները, որոնք արդեն լուծել են իրենց բնակարանային խնդիրը, երջանիկ են, որ կարող են վերջապես դուրս գալ խարխուլ տնակներից ու ապրել վերանորոգված ու լուսավոր բնակարաններում:

## New Apartments for Families Hit by the Earthquake

20 years after the earthquake that seemed to be centuries: years which left behind many lives, broke homes, destroyed life... Years that are now in the past. Instead there is optimism and belief. Belief, which is in the core of Corporate Social Responsibility. Families from Gyumri, which used to live in campers, with VivaCell-MTS social investment opened a new page of life getting keys for their new apartments.

Corporate Social Responsibility, which makes VivaCell-MTS unique among all other companies in Armenia, made us feel ownership and prepare this pre-New Year gift to those who most needed it. Now these families, which have already solved their housing problems, are happy for coming out of ruined campers and for having opportunity to live in renovated and light apartments finally.











Corporate Social Responsibility

## Բովանդակություն


8 Մեր նվաճումները
22 Ուրցաձորի դպրոցի վերանորոգում
24 Խմելու ջրի համակարգ Փարպի և Ուշի գյուղերում
26 Խմելու ջրագիծ Արտաշավան գյուղում
28 Մեծամորի բուժհամալիր
30 Հակակարկտային համակարգ Շենիկ գյուղում
32 Սիսիանի գեղարվեստի դպրոց
34 Դիլիջանի արվեստի դպրոց
36 Խաչիկ գյուղում իրականացված ծրագրեր
38 Եղեգնաձորի մշակույթի տուն / ամֆիթատրոն
40 Օձունի արվեստի դպրոց
42 Ալավերդու մանկապարտեզ
44 Չարենցավանի խաղահրապարակներ
46 Էլեկտրաէներգիա Յանըղ, Քարվանսարա և Փոքր Աստղաձոր գյուղերում
48 Գեղամավանի արգելապատնեշ
50 «Ոսկե ծիրան» Երևանի միջազգային կինոփառատոն
52 Ձեռք ձեռքի՝ հանուն բնության
54 Գառնու արվեստի դպրոցի նոր հեռանկարները
56 «Վերադարձի» փառատոն
58 «Ազգային պատկերասրահ» երաժշտական փառատոն
60 Հատուկ վերաբերմունք նորածիններին և նրանց մայրերին
62 Մովսես գյուղի նորակառույց մանկապարտեզը
64 «Ճանաչեք հայկական հուշարձանները»
66 Նոր բնակարաններ երկրաշարժից տուժած ընտանիքներին

## Table of Contents


7 Our Achievements
22 The Urtsadzor Village School Renovation
24 Drinking Water System in Parpi and Ushi Villages
26 Drinking Water in Artashavan Village
28 Metsamor Medical Center
30 Anti-hail System in Shenik Village
32 Sisian Fine Arts School
34 Dilijan Arts School
36 Projects in Khachik Village
38 Yeghegnadzor House of Culture / Amphitheatre
40 Odzun Arts School
42 Kindergarten in Alaverdi
44 Playgrounds in Charentsavan
46 Electricity Supply in Yanegh, Karvansara and Pokr Astghadzor Villages
48 Protective Fence in Geghamavan
50 Golden Apricot Yerevan International Film Festiva
52 Joining Hands for Nature
54 New Perspectives for Garni Arts School
56 The Return Festival
58 National Gallery Music Festiva
60 Special Attitude to Infants and their Mothersl
62 The New Kindergarten of Movses Village
64 Recognize the Armenian Monuments project
66 New Apartments for Families Hit by the Earthquake






Save the Nature
Թողեք ԱՊՐԵՄ
let me
www.savethenature.am
















VIVA
FPW












































































Կորպորատիվ Սոցիալական Պատասխանատվություն

**Corporate Social Responsibility**

Լուսանկարիչ՝ Դավիթ Այվազյան
Ձևավորում՝ "Ֆայնեռգ" ՍՊԸ
Տպագրություն՝ "Ասողիկ" ՍՊԸ

Photographer: Davit Ayvazyan
Design: Fainberg LLC
Printing: Asoghik LTD

Վիվասել-ՄՏՍ-ը Հայաստանին
VivaCell-MTS to Armenia
2008

Վիվասել-ՄՏՍ
«Կ-Տելեկոմ» ՓԲԸ

Արգիշտի փողոց 4/1, Երևան 0015, ՀՀ
Հեռ. +374 10 568777, +374 93 568777
Ֆաքս.+374 10 569222, +374 93 569222
www.vivacell.am, info@vivacell.am

4/1 Argishty Street, Yerevan 0015, RA
Tel.: +374 10 568777, +374 93 568777
Fax: +374 10 569222, +374 93 569222
www.vivacell.am, info@vivacell.am